

5.22. Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ 2007 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2007թ. մթնոլորտային արտանետումները կազմել են 183.9 հազ. տ, որի 81.4%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտին, 18.6%-ը՝ արտանետման անշարժ աղբյուրներին:

Արտանետման անշարժ աղբյուրների քանակը 2007թ. կազմել է 2750, որոնց 87.7%-ն ունեցել են սահմանային թույլատրելի հաստատված չափորոշներ: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 206.3 հազ. տ, որի 83.4%-ը որսվել է, մնացած 16.6%-ը՝ արտանետվել մթնոլորտ: Արտանետում ունեցող մեկ կազմակերպության հաշվով արտանետումները կազմել են 40.8 տ, մեկ բնակչի հաշվով՝ 10.6 կգ, մեկ քառ. կմ-ի հաշվով (առանց Սևանա լճի հայելու մակերեսի՝ 1260.4 քառ. կմ /2007թ. միջին/) 1.2 տ:

Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերը և դրանց շարժն ըստ ՀՀ մարզերի, 2007թ.

(տոննա)

	Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը	Որսված վնասակար նյութերի քանակը	Մթնոլորտային արտանետումների քանակը
ք.Երևան	9224.4	6234.5	2989.9
Արագածոտն	165.8	-	165.8
Արարատ	109785.2	107771.0	2014.2
Արմավիր	42.1	-	42.1
Գեղարքունիք	36.6	-	36.6
Լոռի	25292.7	-	25292.7
Կոտայք	60733.7	57829.6	2904.1
Շիրակ	296.9	0.5	296.4
Սյունիք	509.9	251.3	258.6
Վայոց ձոր	136.3	2.8	133.5
Տավուշ	105.2	-	105.2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ	206328.8	172089.7	34239.1

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի 74.9%-ը կազմել է ծծմբային անհիդրիդը (25.6 հազ. տ), 8.0%-ը՝ ածխածնի օքսիդը (2.7 հազ. տ), 4.9%-ը՝ ազոտի օքսիդները (1.7 հազ. տ): Ծանր մետաղների գումարային քանակը մթնոլորտային արտանետումներում կազմել է 41.7 տ: Մթնոլորտ արտանետված փոշու քանակը կազմել է 2916.5 տ, որի 7.5%-ը (220.1 տ) բաժին է ընկել օրգանական փոշուն:

2007թ. ցնդող օրգանական միացությունների քանակը մթնոլորտային ընդհանուր արտանետումներում կազմել է 139.3 տ:

Մթնոլորտային տեսակարար արտանետումներն ըստ ՀՀ մարզերի, 2007թ.

	Արտանետումները		
	մարզի մեկ բնակչի հաշվով, կգ	մարզի մեկ քառ.կմ հաշվով, կգ ¹	մարզի մեկ կազմակերպության հաշվով, տ ²
ք.Երևան	2.7	13171.4	8.2
Արագածոտն	1.2	60.2	2.4
Արարատ	7.3	961.0	28.4
Արմավիր	0.1	33.9	4.7
Գեղարքունիք	0.2	9.0	3.1
Լոռի	89.6	6675.3	351.3
Կոտայք	10.5	1390.2	27.1
Շիրակ	1.1	110.6	3.7
Սյունիք	1.7	57.4	18.5

¹ Առանց Սևանա լճի հայելու մակերեսի:

² Ցուցանիշները հաշվարկվել են ըստ արտանետումների մասին հաշվետվություններ կայացրած կազմակերպությունների քանակի:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Արտանետումները		
	մարզի մեկ բնակչի հաշվով, կգ	մարզի մեկ քառ.կմ հաշվով, կգ ¹	մարզի մեկ կազմակերպության հաշվով, տ ²
Վայոց ձոր	2.4	57.8	7.0
Տավուշ	0.8	38.9	4.4
Ընդամենը ԳԳ	10.6	1202.1	40.8

Ավտորտանսպորտից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2007թ. կազմել է 149.7 հազ. տ: Դրանց մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել ածխածնի օքսիդը՝ 108.8 հազ. տ կամ ընդհանուր արտանետումների 72.7%-ը, ցնդող օրգանական միացությունները՝ 26.4 հազ. տ կամ 17.7%, ազոտի օքսիդները՝ 13.8 հազ. տ կամ 9.2%: Ավտորտանսպորտից մթնոլորտ արտանետված ջերմոցային գազերի քանակը կազմել է 1805.1 հազ. տ (արտահայտված ածխածնի երկօքսիդի համարժեքով), որից ածխածնի երկօքսիդը՝ 1483.3 հազ. տ, մեթանը՝ 14.9 հազ. տ (313.1 հազ. տ՝ արտահայտված ածխածնի երկօքսիդի համարժեքով), իսկ ազոտի ենթօքսիդի քանակը կազմել է 28.0 տ (8.7 հազ. տ՝ արտահայտված ածխածնի երկօքսիդի համարժեքով):

Ավտորտանսպորտից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քաշիվածությունը, 2002-2007թթ.

	2002	2003	2004	2005	2006	(տոննա) 2007
Ազոտի օքսիդներ	10261.0	12002.0	12439.0	12483.0	12831.0	13829.0
Ցնդող օրգանական միացություններ	25329.0	27782.0	29256.0	27346.0	26156.0	26442.0
Ածխածնի օքսիդ	97169.0	107346.0	113460.0	107658.0	105469.0	108772.0
Մուլը	374.0	479.0	462.0	483.0	485.0	521.0
Կապար	1.1	1.3	1.8	1.3	1.2	0.8
Ծծմբի երկօքսիդ	305.0	370.0	360.0	247.0	113.0	95.0
Ընդամենը	133439.1	147980.3	155978.8	148218.3	145055.2	149659.8